



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁԻ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 10 » մարտի 2015թ.

N 29

ք. Ստեփանակերտ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնում աշխատանքի բաժանում կատարելու մասին

Ղեկավարվելով «Դատախազության մասին» ԼՂՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով և 28-րդ հոդվածով, համաձայն ԼՂՀ դատախազության Կանոնակարգի 9-րդ, 19-րդ, 22-րդ, 26-րդ կետերի և «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 72-րդ և 73-րդ հոդվածների

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. ԼՂՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնում /այսուհետ բաժին/, ըստ զբաղեցրած պաշտոնների, կատարել աշխատանքի հետևյալ բաժանումը.

1) Բաժնի պետ Գ.Ս.Իշխանյանին՝

1.1 Կազմակերպել և իրականացնել բաժնի աշխատակիցների ընդհանուր ղեկավարումը:

1.2 Վերահսկել բաժնի աշխատակիցների վրա դրված պարտականությունների կատարումը:

1.3 Ապահովել պետական շահերի պաշտպանության հարցերով ԼՂՀ գլխավոր դատախազի հրամանների, ցուցումների և կարգադրությունների, ոլորտը համակարգող տեղակալի ցուցումների կատարումը:

1.4 Առաջարկություններ ներկայացնել ոլորտը համակարգող ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալին՝ բաժնի աշխատակիցներին խրախուսելու կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

1.5 Պետական շահերի պաշտպանության հայցերի նախապատրաստման և հարուցման, ինչպես նաև պետության գույքային շահերին առնչվող դատարանների վճիռների ու որոշումների բողոքարկման աշխատանքների ստուգման և ամփոփման արդյունքներով ԼՂՀ գլխավոր դատախազին և ոլորտը համակարգող տեղակալին ներկայացնել տեղեկատվական, մեթոդական և այլ փաստաթղթերի նախագծեր:

1.6 Մասնակցել ԼՂՀ գլխավոր դատախազության աշխատանքային ծրագրի նախապատրաստման աշխատանքներին:

1.7 Կազմակերպել բաժնի վիճակագրական հաշվետվության կազմման աշխատանքները:

1.8 Հրավիրել օպերատիվ խորհրդակցություն:

1.9 Կատարել ԼՂՀ գլխավոր դատախազի և ոլորտը համակարգող տեղակալի այլ հանձնարարությունները:

Բաժնի պետը բաժնի գործունեության համար պատասխանատվություն է կրում ԼՂՀ գլխավոր դատախազի և ոլորտը համակարգող տեղակալի առջև:

2) Բաժնի ավագ դատախազ Գ.Ս.Ասրիյանին՝

2.1 Իրականացնել պետական շահերի պաշտպանության գծով աշխատանքները:

2.2 Վերահսկել ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի, Հաղբուֆի, Մարտունու և Շահումյանի շրջանների դատախազությունների կողմից իրականացված պետական շահերի պաշտպանության գծով աշխատանքները:

3) Բաժնի դատախազ Գ.Ս.Գաբրիելյանին՝

3.1 Իրականացնել պետական շահերի պաշտպանության գծով աշխատանքները:

3.2 Վերահսկել ԼՂՀ Մարտակերտի, Ասկերանի, Շուշիի և Քաշաթաղի շրջանների դատախազությունների կողմից իրականացված պետական շահերի պաշտպանության գծով աշխատանքները:

2. Ուժը կորցրած ճանաչել ԼՂՀ գլխավոր դատախազի թիվ 47 առ 21.05.2009 թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնում աշխատանքի բաժանում կատարելու մասին» հրամանը:

3. Հրամանն ուղարկել ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ԼՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազին ու դատախազին, բաժինների պետերին և ԼՂՀ քաղշրջդատախազներին:

4. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական**

Ա.Ա.Մոսիյան